Կիրակի Տնտեսի Մարտի ԺԴ գնացին ի գերեզմանեն նոքա։

Եւ ի գիշերիս Ե–երորդ ժամու, որ առաւօտուն Բշի ԺԵ–ն Մարտի μαγαμυανεν (այսպէս) նստոս էր և ամպով պատեալ եղև զերկինն և առաւօտն դարձոյց ի պարզեղ։ Տէր Ալիքսանի աղջիկն մեռաւ Հաճիմար, և Սլաճաճուն կնիկն մեռաւ՝ մայր Սալանին Մղտսոյ.

Եւ Դշի աւուր (17 Մարտ) գնացեալ իմ մօտ առ իշխանսն գրել զթուղթ Էտրէնէցոց, զի մի՛ հաղորդեսցին ընդ Թումա անուանեալ վարդապետն որ անդ գնացեալ։ Եւ կէս աւուրս ելեալ ի խանութէ հասայ ի տուն և անկայ ախտիւ հիւանդութեան զաւուրս բազումս, Մարտի ԺԷ–է մինչ Մայիս Գ։ Գթացեալ Աստուած և ազատեալ յայնմ ախտէ՝ ոչ յիշելով զմեղս մեր, այլ խափանումն եղև այսմ գործոյ։

Ցաւուրքս զղազիէսքէրքն փոխեցին անդ։

Ապրիլ ամիս օր Եշի։ Եւ ի կողմս Նիկոմիդացոց եկն անձրև յորդ և տեղայր ընդ անձրևին ձուկն ծովու, զի ծովափ է երկիրն, և որք կերանն զձուկն՝ մեռան։

Ռուհիճանն ընդ Մարտիրոս վարդապետին գնացին առ վէզիրն, և նա ասաց՝ Բերէ՛ք զէմրն ձեր զի տեսից. պատասխանեցին՝ Գնացին յԵրուսաղէմ. և ասաց՝ Ցետ դարձո՛յ զի եկեսցէ։ Եւ երկրորդ գնացին, ասաց թէ Ո՞չ ասացի դարձուցանել զէմրն. ահա՛ էմր խընդրեն Ցոյնք զի եկեսցէ պատրիգն իւրեանց. տա՞մ թէ ոչ։ Եւ երրորդ ասաց՝ Ղալիոն մի շինեսջիք թագաւորին՝ զի հրամայեցից ձեզ. և ապա բերանով քեհեաին հաւանեալ՝ թէ զայեխ մի. և ոչ կասեցին մինչև ետ էմր Ցունաց՝ բերեալ զպատրիգն. և ոխն ծածկեցաւ ի սրտին և զի ընծայ ևս ոչ ետուն թէ Ոչ նստի հաստատ, վասն որոյ և եղև (Ռէբէ)։